ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
27 դեկտեմբերի 1997 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ

Հոդված 19. Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը

Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

«ՀՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հրատեխնիկական ապրանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքի տարածքում վաճառքի և շահագործման համար չարգելված հրատեխնիկական արտադրատեսակների) իրացման և/կամ շահագործման իրավունք ձեռք բերելու համար՝	-
ֆիզիկական անձանցից	տարեկան բազային տուրքի 10-ապատիկի չափով
իրավաբանական անձանցից	տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով

Հոդված 20.1. Օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ

զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար պետական տուրքի դրույքաչափերը

1. Ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

~~1) հրագործական ապրանքների արտադրության, ներմուծման կամ առևտրի իրականացման իրավունք ձեռք բերելու համար՝~~	-
~~ֆիզիկական անձանցից~~	~~տարեկան բազային տուրքի 10-ապատիկի չափով~~
~~իրավաբանական անձանցից~~	~~տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով~~
2) անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատվաստուկների, շիճուկների և ախտորոշիչ միջոցների արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով
3) անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացման իրավունք ձեռք բերելու համար՝	
ֆիզիկական անձանցից	տարեկան բազային տուրքի 10-ապատիկի չափով
իրավաբանական անձանցից	տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով
4) բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի իրականացման իրավունք ձեռք բերելու համար՝	